ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 հունիսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

83
(2933)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՔԱՌՍԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է



Բազմիցս անդրադարձել ենք ծխախոտի շուկայում տիրող իրավիճակին ու փոխանցել քաղաքացիներից ու ուժային կառույցների աղբյուրներից եկող մտահոգությունները կապված ծխախոտի անօրինական շրջանառության փաստերի հետ: Պետք է արձանագրել, որ հրապարակումներից հետո ՊԵԿ-ն ու ոստիկանությունը հիմնականում արձագանքել են, ու իրականացվել են ձերբակալություններ, ստուգումներ: Ցավոք, իրավիճակը հեռու է բավարար լինելուց՝ շարունակում ենք ստանալ տեղեկություններ շուկայում անօրինական շրջանառության փաստերի վերաբերյալ: Վերոնշյալ սպիտակ տուփերով ծխախոտի շրջանառությունը շարունակում է տեղի ունենալ, ու վաճառքները հիմնականում կատարվում են օնլայն հարթակների միջոցով, իսկ մարզերում՝ տանից տուն գնալով: Տեղադրվում են հայտարարություններ վաճառքի մասին, դեպքեր են արձանագրվում նաեւ արտասահմանից մաքսանենգ ճանապարհով ծխախոտի ներմուծման, ապա դրանք, հիմնականում, խոշոր քաղաքներից ու խոշոր խանութներից հեռու վաճառելու մասին: Մեր անդրադարձներից հետո արդարադատության նախարարությունից, տեսչությունից ու համապատասխան գերատեսչություններից մեզ հետ կապվեցին պետպաշտոնյաներ ու նշեցին, որ հարցի լուծումը հնարավոր է, եթե կիրառվի այս տարվանից ուժի մեջ մտած օրենսդրական կարգավորումը, որով պարտադիր է արտադրվող ու ներմուծվող ծխախոտի տուփի վրա՝ ծխելու հետեւանքով առաջացող հիվանդությունների սարսափեցնող նկարների տպագրումը, այն հնարավորություն կտա արագ տարբերել, թե որն է մաքսանենգ կամ անօրինական շրջանառվող ապրանքը, որը՝ օրինական: Մեր այն հարցին, թե ինչու օրենսդրական այդ պահանջը չի կատարվում, կամ գրեթե չի կատարվում, պատասխանեցին, որ արտադրողների ու ներմուծողների գերակշիռ մասը ներկայացնում են, իբրեւ թե շուկայում շրջանառվում է մինչեւ 2024թ.-ի հունվար ամիսը ներմուծված ու արտադրված ծխախոտ, նման պահանջ էլ արտադրման ու ներմուծման պահին չի եղել, իսկ մեր աղբյուները պնդում են՝ դա բերում է նրան, որ ապօրինի վաճառքը շարունակում է զարգանալ: Սպասենք, թե երբ շուկայում կլինեն ամբողջությամբ «նկարներով» տուփեր:

Ստացվում է, որ պետությունը ստանձնում է պարտավորություններ, որոնք կամ չի կարողանում իրացնել, կամ դրանց հետեւանքով շուկան ողողվում է անօրինական արտադրությամբ: Իսկ սոցիալապես վատ պայմաններում բնակվող մեր քաղաքացիների համար, բնականաբար, նախընտրելի է էժան ծխախոտը: Կարճ ասած՝ պետությունը, կարծես թե, ի վիճակի չէ կարգավորված ու օրինական պայմաններ ապահովել: Պետության անկարողության մասին մենք փորձեցինք զրուցել առողջապահության նախկին նախարար, այժմ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանի հետ, սակայն նա որեւէ կերպ չարձագանքեց մեր զանգերին:

Երեւանի ավագանին առաջիկա նիստում կքննարկի քաղաքի որոշ հատվածներում մշակութային գործունեության իրականացումը սահմանափակելու մասին որոշման նախագիծը. ու դա ավագանու՝ հունիսի 25-ի նիստում ընդգրկված միակ զեկուցվող հարցն է, մնացած 17 հարցերը չզեկուցվող են: Նախագծով, մասնավորապես, Երեւանի որոշ հատվածներում արգելվելու է շրջիկ երաժիշտների մշակութային գործունեության իրականացումը, ասել է թե՝ թափառաշրջիկ երաժիշտներին հեռացնում են Երեւանի կենտրոնից: «Ժողովուրդ» օրաթերթը քաղաքապետարանի կայքէջում հրապարակված նախագծից տեղեկացավ, որ շրջիկ երաժիշտների մշակութային գործունեության իրականացումը կարգելվի Երեւան քաղաքի հետեւյալ տարածքներում՝ Հանրապետության հրապարակ եւ դրան հարակից 100 մետր շառավղով տարածք, Մաշտոցի պողոտա-Սայաթ-Նովա պողոտա-Տերյան-Թումանյան փողոցներով պարփակված տարածք, Հյուսիսային պողոտա եւ դրան հարակից 100 մետր շառավղով տարածք: Մեզ հետ զրույցում ավագանու ՔՊ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանն ասաց, որ նախագիծն առաջիկայում կքննարկվի հանձնաժողովում, հնարավոր է՝ որոշակի փոփոխությունների ենթարկվի մինչեւ ավագանու նիստի օրակարգ մտնելը. «Կարող է առաջարկներ լինեն, ու ըստ այդմ՝ նաեւ որոշակի փոփոխություններ, բայց ընդհանուր առմամբ մեր դիրքորոշումն այն է, որ խնդիրը լուծվի», - ասաց նա:

Հոգեբանները ներխուժել են դատական համակարգ. ՀՀ դատական դեպարտամենտը մեկ տարում 10 պայմանագիր է կնքել հոգեբանի ծառայությունների ձեռքբերման համար: Պայմանագրերը կնքված են՝ դատական նիստերին ներգրավված հոգեբանների ծառայություններ ձեռք բերելու համար: ՀՀ Դատական օրենսգրքի «Դատական իշխանությունների եւ գործունեության հիմունքները» բաժնում առկա գլուխ 16-ի՝ առաջին ատյանի դատարանների դատավորների եւ դատարանի նախագահների նշանակման կարգի 108-րդ «Հարցազրույցի անցկացում» հոդվածում է միայն հիշատակվում հոգեբան բառը, այն է՝ թեկնածուի հարցազրույցն անցկացնում է Բարձրագույն դատական խորհուրդը, որին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաեւ հոգեբան: Այսինքն՝ հոգեբանի այցելությունը ոչ օրենքով է սահմանված, ոչ պարտադիր է: Դատական դեպարտամենտի գնումների ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ հոգեբանի ծառայությունները ներգրավված են այն գործերում, որոնցում առկա է անչափահաս անձի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցություն: Գործերի հիմնական բնույթը քրեական է: Որպես օրինակ՝ դիտարկենք մեկ քրեական գործ. քանի որ առկա է անչափահասի անմիջական մասնակցություն եւ կապված է խորթ հոր կողմից դաժան բռնության դեպքերի հետ, հոգեբանի ծառայությունները՝ ճնշված եւ տուժող ճանաչված անձի մասնակցությամբ դատական նիստի դեպքում անհրաժեշտ են. եւ այս դեպքում ներառվում է հոգեբանը: Շենք, որ կնքված գնումների դրամային սահմանը հատում է 300 հազար դրամի շեմը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ հունիսի 12-ին Բաղրամյան պողոտայում ոստիկանների կողմից կիրառված լուսաձայնային նռնակների ու տեղի ունեցած բախումների առիթով հարուցված քրեական վարույթով հերթը հասել է մի շարք լրատվամիջոցների տուժած լրագրողների եւ օպերատորների հարցաքննությանը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ քննիչները լրատվամիջոցների ներկայացուցիչներին հարցնում են, թե ինչ կապ ունեն շարժման առաջնորդ Բագրատ Սրբազանի հետ, ում հորդորով կամ շահագրգռությամբ են գնացել Բաղրամյան պողոտա, արդյոք հեռախոսազրույց ունեցել են շարժման առաջնորդի հետ: Հարցաքննված լրատվամիջոցների ներկայացուցիչները քննիչների խաչաձեւ, բայց նույնաբովանդակ հարցերին պատասխանել են, որ գնացել են իրենց մասնագիտական գործունեությունը իրականացնելու, ինչը անում են բոլոր դեպքերում ու իրավիճակներում՝ անկախ առաջնորդի ով լինելուց, քանի որ դա իրադարձություն է երկրում, իսկ ԶԼՄ-ներն էլ լուսաբանում են տեղի ունենալիքը: Հիշեցնենք, որ տուժած քաղաքացիներին հարցաքննելիս էլ օրենքի պահապանները ոչ թե նրանց հետ կատարվածի մեղավորներին՝ ասել է թե՝ ոստիկաններին պատժելու եւ քաղաքացիների խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքներն են պաշտպանում, այլ քաղաքացիներին հանրահավաքի հրավիրողների կամ կազմակերպողների դեմ ցուցմունքներ կորզելու համար են հարցաքննում: Հավելենք, որ այս պատկերին զուգահեռ իրավապահները ակտիվ գործընթաց են սկսել եւ «քաղաքական հրահանգի արդյունքում» կալանավորում են «Տավուշը հանուն հայրենիքի շարժման մասնակիցներին»: Ապրիլից մինչեւ օրս տեղի ունեցած ակցիաներին մասնակցության համար պաշտոնապես կալանավորված է 29 քաղաքացի, բայց գործը այսքանով չի ավարտվի. «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջիկայում նոր կալանավորումներ եւս կլինեն:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ԹՈՇԱԿՆԵՐԸ ՉԵՆ ԲԱԺԱՆՎԵԼ

Արցախի ԱԺ «Միասնական հայրենիք» խմբակցության ղեկավար Սեյրան Հայրապետյանը փետրվարյան իր էջում անդրադարձել էր, որ բռնի տեղահանված արցախցիների 2023 թ. սեպտեմբեր ամսվա զինվորական եւ բաղաքացիական թոշակները չեն բաժանվել:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով մի քանի հարց է ուղղել Սեյրան Հայրապետյանին:

-Պարոն Հայրապետյան, Ձեր գրառման հետքերով՝ կխնդրեմ մի փոքր մանրամասնեք՝ ինչի մասին է խոսքը, եւ որտեղից նման անդրադարձ ունեք, որ արցախցիների թոշակները չեն բաժանվել:

-Ես հավաստի տեղեկություններ ունեմ, որ սեպտեմբեր ամսվա թոշակները համապատասխան կարգով դուրս են գրվել, որից հետո, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախը գտնվում է շրջափակման մեջ, եւ այդ գումարները համապատասխան շրջաններ հասցնել հետը կապված խնդիրներ կային, ում կարողացել, այդ գումարը տվել են՝ քարտային փոխանցումով, իսկ այն գումարները, որոնք առձեռն պետք է վերցվեին՝ փոստատարի միջոցով, արցախցիները չեն ստացել:

Այս հարցով մենք փորձել ենք Արցախի կառավարության հետ ճշտումներ անել, ցուցակ ճշտել, ամեն անգամ վստահեցրել են, որ ընթացքի մեջ է, այսինքն՝ գումարը չի կորչել, գտնվում է համապատասխան բալանսում, այն ինչ չի տրվել, վերադարձվելու է: Վերջին անգամ երբ ճշտել ենք, Արցախի կառավարությունից մեզ հայտնել են, որ Հայաստանի կառավարությունը սառեցրել է բոլոր միջոցները, եւ չեն կարող գումարը հատկացնել քաղաքացիներին:

Արցախի կառավարությունը ներկայացրել է, որ քաղաքացիների ցուցակները լրիվությամբ կան, ներկայացվել են ՀՀ համապատասխան նախարարություններ, բայց քանի որ գումարները սառեցված են, նրանք չեն ստանում:

-Իսկ ի՞նչ են պատճառաբանել՝ ինչո՞ւ են թոշակները սառեցվել:

-Մի կողմը պատճառաբանում է, որ սեպտեմբերի թոշակները հատկացրել են, մյուս կողմն էլ պատճառաբանում է՝ քանի որ տեխնիկական պատճառներով գումարը չեն կարողացել փոխանցել, դրանք մնում են բալանսում, այսինքն՝ սառեցված են: Մենք սպասելու ենք ՀՀ համապատասխան մարմինների արձագանքին, եթե տվյալ հարցը լուծում չստանա, մենք հաղորդում ենք տալու հանցագործության մասին:

-Կխնդրեմ նաեւ նշեք, թե քանի քաղաքացի չեն ստացել թոշակները, ընդհանուր որքան գումարի մասին է խոսքը:

-Հստակ գիտենք, որ որոշ մարդիկ չեն ստացել, կարող է՝ տասնյակ, կարող է՝ հարյուրավոր, դա արդեն հարցի մյուս կողմն է:

Գումարն ընդհանուր չեմ կարող ասել, բայց եթե խոսքը քաղաքացիական թոշակի մասին է, ապա մեկ անձին՝35-ից մինչեւ 78 հազար դրամ է հասնում, իսկ զինվորական թոշակները տարբեր են: Ակնկալիք է եղել, որ մարդկանց ցուցակները վերցրել են, որ հարցին վերջնական լուծում տրվի, բայց ոչինչ էլ չի արվել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՍՈՒԼԻՍ

«ԳՆԱԼՈՒ ԵՆՔ ՉՀԱՐԿԱԴՐՎԱԾ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»

«Ի՞նչ են ուզում, ԵՄ մուտքն ինչպե՞ս են ուզում ներկայացնել, ժողովրդին ասելու են՝ այս գործընթացին համաձայնեցիք՝ ազատ վիզա եք ստանալու»: Այս մասին՝ հրավիրված մամուլի ասուլիսին ասաց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ Բագրատ Սրբազանը:



«ԵՄ-ին անդամագրվելն այս պահին անիրատեսական է խորքային եւ գործընթացների իմաստով: Միգուցե ինչ-որ ժամանակ հնարավոր լինի, բայց դա չափազանց ծանր, դժվար, պահանջներով գործընթաց է: ԵՄ մուտքը ինչպե՞ս են ուզում ներկայացնել: Ժողովրդին ասելու են՝ այս գործընթացին համաձայնեցիք՝ ազատ վիզա եք ստանալու Եվրոպա գնալ-գալու համար», - ասաց նա:

Նրա խոսքով՝ Եվրոպա ազատ ելումուտի անվան տակ խաբելու են ժողովրդին, փորձելու են իրականացնել Սահմանադրության փոփոխություն, անկախության հռչակագրից հրաժարում եւ այլն:

Սրբազանը, անդրադառնալով սահմանազատման եւ բանակցությունների հարցերին, նշել է. «Ես դեմ եմ, որ մենք գնանք ինչ-որ երկրների դեսպանատների առջեւ թախանձագին պիկետներ անենք, խնդրենք, որ դատապարտեն. բայց եթե շարժման մասնակիցները ցանկանան, որ այդպես լինի, այդպես կլինի: Ուրիշ միջոցներ էլ կան դրան հասնելու: Ես անձնապես կողմ չեմ նման քայլերի: Մենք երկիր ունենք, մեր հարցերը պետք է ներսում լուծենք:

Ինչ մնում է իրենց վերաբերմունքին, իմ ասածը արդարության մասին է: Ի՞նչ երես ունեն իրենք... Երկակի ստանդարտները աշխարհում հայտնի են, մեր կյանքում էլ նույնն է: Մենք ոչ մեկից ոչ թախանձելու, ոչ խնդրելու բան ունենք, մենք պահանջելու բան ունենք»,- ասաց նա:

Հարցին՝ իր իշխանության գալու դեպքում ինչպե՞ս է խաղաղություն բերելու, կասեցնելո՞ւ է սահմանազատում, թե՞ ոչ, արդյոք այլ օրակա՞րգ է առաջ բերելու, Սրբազանը պատասխանեց. «Ես մի քանի անգամ ներկայացրել եմ այդ օրակարգը: Մենք ենք խաղաղություն բերողը, այս մարդը պատերազմ բերողն է եւ այն շարունակողն է: Եթե անարդարության հիմքով է մի բանը տեղի ունենում, դա նորից պայթելու է: Դուք ինչպե՞ս եք պատկերացնում՝ Կիրանցի ժողովուրդը այդ արհավիրքի մեջ ապրի տարիներ: Մենք երկարաժամկետ, կայուն խաղաղություն բերողն ենք: Այսօրվա մեր ունեցած գործիքակազմը իրական բանակցություններն են, ոչ թե հարկադրանքի տակ բանակցությունները: Մենք պետք է այդ բանակցային սեղանի շուրջ թելադրենք մեր պայմանները: Դրանցից առաջինը մեր ռազմագերիների վերադարձի պայմանն է, արցախցիների վերադարձի իրավունքն է, երրորդը՝ սահմանազատում անելուց առաջ հասնել նրան, որ, այսպես կոչված, խաղաղության պայմանագիրը կնքվի, նոր սկսվեն մնացած գործընթացները: Սահմանազատումը պետք է տեղի ունենա փաթեթով, համապատասխան, կոորդինատներով, սահմանագծումներով, սահմանազատումների նշումներով, համապատասխան քարտեզներով», - նշել է Բագրատ Սրբազանը:

ՉԻ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՇՓՈՒՄՆԵՐԻՑ

Ռուսաստանը չի հրաժարվում ռազմատեխնիկական ոլորտում Հայաստանի հետ շփումներից: Այս մասին ճեպազրույցում հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ կապված ՌԴ փոխարտգործնախարար Միխայիլ Գալուզինի հայտարարության եւ այն լուրերի հետ, որ Ռուսաստանը կարող է հրաժարվել Հայաստանի հետ զենքի մատակարարման վերաբերյալ բանակցություններից:

Զախարովան կոչ է արել ռազմական արտադրանքի մատակարարման հարցերով դիմել համապատասխան բաժիններին: «Զենքի եւ ռազմական տեխնիկայի առանձին տեսակների նկատմամբ առկա սահմանափակումները վերաբերում են ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ մեր մյուս գործընկերների հետ ռազմատեխնիկական համագործակցությանը: Ինչ վերաբերում է ռազմատեխնիկական ոլորտում Հայաստանի հետ շփումներին, մենք դրանցից չենք հրաժարվում, դրանք կանոնավոր կերպով են ընթանում», - ասել է Զախարովան:

«ՄԱՐՏԻ 1»-Ը ԲԱՑԱՀԱՅՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

««Մարտի 1»-ը ողբերգություն է բոլոր առումներով, այն լիարժեք բացահայտելու հնարավորություն ուներ այս իշխանությունը վեց տարվա ընթացքում, հետեւաբար, երբ իրենք կբացահայտեն, գնահատական կտան, ես էլ ինձ իրավունք կվերապահեմ գնահատական տալու». - այս մասին երեկ՝ հունիսի 19-ին՝ մամուլի ասուլիսի ժամանակ, նշեց Բագրատ Սրբազանը՝ պատասխանելով հարցին, թե ինչու ժամանակին գնահատական չի հնչեցրել «Մարտի 1»-ի վերաբերյալ, երբ հիմա հունիսի 12-ի իրադարձությունները համեմատում է այդ օրվա հետ:

Բագրատ Սրբազանը նաեւ ասաց, «Մարտի 1»-ի հետ համեմատությունը զուտ անձի պատճառով է եղել:

«Այդ մարդն ի՞նչ էր ասում «Մարտի 1»-ին՝ հոգին փառավորվում էր, քաղաքացիներին հրահրում էր, որ ոստիկաններին ջարդեն, երկաթներ վերցնեն, ինքնպաշտպանվեն: Ես համեմատել եմ այդ դրվագը այս դրվագի հետ:

Ես այն մարդը չեմ, որ «Մարտի 1»-ի քաղաքական գնահատական տամ: Դատարան կա, վեց տարի դատարանն իրենց ձեռքում է, բոլոր հնարավոր տարբերակներով՝ ԱԱԾ, փաստաթղթեր, ամեն ինչ իրենց ձեռքում է, թող բացահայտեն», - նշեց Բագրատ Սրբազանը:

Նա ասաց, որ «Մարտի 1»-ը Հայաստանի պատմության ամենասեւ էջերից մեկն է:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հայտարարությամբ է հանդես եկել:

«Հայաստան-Ֆրանսիա ռազմատեխնիկական համագործակցության վերաբերյալ պաշտոնական Բաքվի արձագանքը տարակուսանքի տեղիք է տալիս: Մարտունակ եւ ժամանակակից զինտեխնիկայով սպառազինված բանակ ունենալը ցանկացած երկրի ինքնիշխան իրավունքն է:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է իր բոլոր հարեւանների տարածքային ամբողջականությունն ու սահմանների անխախտելիությունը: Հայաստանն ու Ադրբեջանը բարձրագույն մակարդակում պայմանավորվել են, որ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը եւ ինքնիշխանությունը՝ 1991 թվականի Ալմաթիի հռչակագրի հիման վրա: Հայաստանի Հանրապետությունը հավատարիմ է այս սկզբունքին եւ միջազգայնորեն ճանաչված իր 29 հազար 743 քառակուսի կիլոմետր տարածքից դուրս հավակնություններ չունի: Հայաստանի Հանրապետությունն այս մոտեցումը գործնականում ապացուցել է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի եւ Ադրբեջանի Հանրապետության Ղազախի շրջանի չորս գյուղերի շրջանում սահմանազատում իրականացնելու նախաձեռնությամբ: Ադրբեջանին կոչ ենք անում վերջ դնել ՀՀ ավելի քան 30 գյուղերի կենսական նշանակության տարածքների օկուպացիային:

Ամեն առիթով տարածաշրջանային սրացումներ կանխատեսելու Ադրբեջանի գործելակերպը մտածելու տեղիք է տալիս եւ գալիս է հիմնավորելու մի շարք կենտրոնների կողմից արվող վերլուծությունները, թե Ադրբեջանն ամեն ինչ անելու է վիժեցնելու Հայաստանի հետ խաղաղության համաձայնագիր կնքելու գործընթացը, 2024թ. նոյեմբերին Բաքվում կայանալիք COP29 գագաթաժողովից հետո Հայաստանի Հանրապետության նկատմամբ նոր ագրեսիա ձեռնարկելու համար:

Միջազգային հանրության ուշադրությունը հրավիրում ենք այս, ինչպես նաեւ այն փաստի վրա, որ 1 ամսվա ընթացքում խաղաղության համաձայնագիր կնքելու պաշտոնական Երեւանի առաջարկը պաշտոնական Բաքվի կողմից մնացել է անարձագանք», - ասվում է հայտարարությունում:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԱԿԱՍՈՒՄ Է ԻՐ ԽՈՍՔԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը կառավարության գրեթե բոլոր նիստերում խոսում է անկանխիկ առեւտրի մասին, խոսում կանխիկի կրճատման մասին, նույնիսկ հանձնարարել էր նախարարություններին՝ գործարքները բացառապես անկանխիկ իրականացնելու համար:

Բայց, պարզվում է, հարկ եղած դեպքում ինքը լավ էլ խախտում է իր առաջադրած սկզբունքները՝ անգամ ամենամանր հարցերում, ասվածի վկայությունը Տեղ համայնքում վարչապետի առեւտուրն է, որի դիմաց վճարում է կանխիկով՝ 12.000 դրամ:

ՄԱԿ-Ը ՊԵՏՔ Է ԱՐՁԱԳԱՆՔԻ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան տեղեկություն չունի՝ հայ-ադրբեջանական բանակցություններում շոշափվո՞ւմ է արդյոք օկուպացված Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի՝ ադրբեջանական բանտում գտնվելու եւ այնտեղ խոշտանգումների ենթարկվելու հարցը:

«Ես չեմ տեսել՝ հայ-ադրբեջանական շփումների ժամանակ բարձրացվո՞ւմ է ՌԴ քաղաքացի չհանդիսացող Ռուբեն Վարդանյանի՝ ադրբեջանական բանտում գտնվելու հարցը: Եթե տեղեկատվություն տրամադրեք, ինձ համար նույնպես հետաքրքիր եւ օգտակար կլինի իմանալ այդ մասին», - ճեպազրույցի ժամանակ լրագրողի հարցին ի պատասխան՝ ասել է Զախարովան:

Նա եւս մեկ անգամ հիշեցրել է, որ Ռուբեն Վարդանյանը հրաժարվել է Ռուսաստանի քաղաքացիությունից, դա արել է բացահայտ, ուստի նման հարց պետք է ուղղել Բաքվին եւ Երեւանին:

2023 թվականի սեպտեմբերից Վարդանյանն ապօրինաբար կալանքի տակ է գտնվում Բաքվի բանտում: Այս տարվա ապրիլին նա հացադուլ էր հայտարարել: Օրերս Վարդանյանի ընտանիքը հայտարարել էր, որ նա խոշտանգումների է ենթարկվել պատժախցում եւ այդ կապակցությամբ հրատապ դիմում է ուղարկել ՄԱԿ-ի հատուկ զեկուցողին:

Ռուսաստանցի միլիարդատեր, ներդրող եւ բարերար Ռուբեն Վարդանյանը 2021 թվականի հունիսին հայտարարել էր, որ ստացել է Հայաստանի քաղաքացիություն եւ մտադիր է զբաղվել հասարակական գործունեությամբ: 2022 թվականի սեպտեմբերին նա հայտարարել էր Ռուսաստանի քաղաքացիությունից հրաժարվելու մասին (այդ խնդրանքը բավարարել էր ՌԴ նախագահը նույն թվականի դեկտեմբերին) եւ մշտական բնակության է տեղափոխվել Արցախ: Նոյեմբերի սկզբին նա դարձել էր Արցախի Հանրապետության պետնախարար՝ թողնելով այդ պաշտոնը 3,5 ամիս անց (2023 թվականի փետրվարին):

Հիշեցնենք, որ Ռուբեն Վարդանյանի միջազգային իրավաբանական թիմը հրատապ դիմում էր ներկայացրել ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի հատուկ զեկուցող Էլիս Էդվարդսին:

Ռուբեն Վարդանյանի ընտանիքը եւ միջազգային փաստաբանը տեղեկացել են, որ 2024 թվականի ապրիլին հայտարարված հացադուլի ժամանակ Վարդանյանին տեղափոխել են պատժախուց, զրկել են խմելու ջրի հասանելիությունից, քնելու եւ արտաքին աշխարհի հետ կապի հնարավորությունից: Տեղեկություն չկա, թե որքան ուժեղ են եղել այդ ամենի արդյունքում նրան հասցված հոգեբանական եւ ֆիզիկական վնասները:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել էր Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոնի նախագահ Սիրանուշ Սահակյանի հետ.

«Այդ հայտարարությունը արդեն իսկ պարունակում է դրսեւորումների նկարագրություն, օրինակ այնտեղ հստակ շեշտադրվել է հացադուլի ընթացքում պատժիչ գործողություններ իրականացնելը, դրան զուգահեռ իրավունքների սահմանափակումը, մեկուսացումը արտաքին աշխարհից, ինչը ազդել է ընտանիքի անդամների հետ կապի վրա, միաժամանակ վատթարացել են պահման պայմանները եւ դրանք զուգակցվել են ջրի, սննդից, քնից զրկելով: Այս գործելակերպը նաեւ ադմինիստրատիվ պրակտիկայի մաս է կազմում, մենք բազմիցս նման ահազանգեր եւ հիմնավորումներ լսել ենք հայրենադարձված գերիներից, որոնք նկարագրել են խոշտանգումը եւ վատ վերաբերմունքը, ինչպես նաեւ այլ գործառույթներ, որտեղ դոմինանտ են եղել ֆիզիկական բռնությունը»:

Սիրանուշ Սահակյանի կարծիքով՝ այս խնդիրը վերաբերում է ոչ միայն Ռուբեն Վարդանյանին, այլ նաեւ այնտեղ պահվող մյուս հայերին, նրանք իրենց ընտանիքների հետ զրուցելիս ակնհայտորեն եղել են ճնշված վիճակում եւ տարաբնույթ մտքեր են հայտնել:

Հարցին, թե արդյոք արձագանք կա միջազգային կազմակերպություններից, թե ոչ, ասել էր.

«Մենք շատ ակտիվ ներգրավվածություն ենք ունեցել Միավորված ազգերի կազմակերպության խոշտանգումների դեմ կոմիտեի քննարկումների շրջանակում եւ 2024 թվականի մայիսին նրանք հրապարակել են կոմիտեի զեկույցը, որտեղ շատ խիստ գնահատականներ են ներկայացված եւ այնտեղ հատուկ բաժին կա, որը նվիրված է հենց հայերի առնչությամբ խոշտանգումների կիրառման պրակտիկային, դրա անթույլատրությանը:

Այստեղ իրավական գործընթացները իրենց պատշաճ հունով ընթանում են, եւ կարծում եմ պետության իրավական թիմը կկարողանա հասնել ճշգրիտ գնահատականների, սակայն այս գնահատականների համար պետք է օգտագործել ճնշում»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՐԱ ԽՃԱՆԿԱՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՔԱՐԿ

ԱՄՆ Կոնգրեսի Հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ, կոնգրեսական Ֆրենկ Փալոնը (դեմոկրատ) եւ Ներկայացուցիչների պալատի անդամ Նիքոլ Մալիոտակիսը (հանրապետական) առաջարկել են երկկուսակցական փոփոխություն կատարել Պետական եւ արտաքին գործառնությունների հատկացումների մասին օրինագծում (FY25 SFOPS):

Նրանք առաջարկել են 100,000,000 դոլարով ավելացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսավորումը Եվրոպայի, Եվրասիայի եւ Կենտրոնական Ասիայի օգնության դաշնային հաշվի (AEECA) շրջանակում:

Ինչպես հաղորդում է Ամերիկայի հայկական համագումարն իր ֆեյսբուքյան էջում, ֆինանսավորումը կաջակցի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին, որոնք ներկայում բնակվում են Հայաստանում, քանի էր ստիպված են եղել լքել իրենց նախնիների հայրենիքը 2023 թվականին Ադրբեջանի լայնածավալ հարձակման պատճառով:

CAESAR ԶԵՆՔԸ

Երեւանը եւ Փարիզը պայմանագիր են կնքել ֆրանսիական CAESAR ինքնագնաց հրացանների մատակարարման համար, այս մասին X սոցիալական ցանցում հայտնել է Ֆրանսիայի պաշտպանության նախարար Սեբաստյան Լեկորնուն:

«Մենք շարունակում ենք ամրապնդել մեր պաշտպանական հարաբերությունները Հայաստանի հետ: Ես ջերմ ու արդյունավետ զրույց ունեցա իմ գործընկեր Սուրեն Պապիկյանի հետ:

Նոր կարեւոր իրադարձություն է CAESAR ատրճանակների գնման պայմանագրի ստորագրումը», - նշել է Լեկորնուն:

CAESAR-ը հապավում է, որը ֆրանսերենով նշանակում է «հրետանային համակարգով հագեցած բեռնատար»: CAESAR-ը 155 մմ ինքնագնաց հրետանային միավոր է, որը մշակվել եւ արտադրվել է ֆրանսիական Nexter ընկերության կողմից:

Բացի Ֆրանսիայից, CAESAR ինքնագնաց հրացանները սպասարկում են Սաուդյան Արաբիայի, Ինդոնեզիայի եւ Թաիլանդի բանակները:

CAESAR համակարգը առանձին փամփուշտով լիցքավորման համակարգ է, որը ունակ է ոչնչացնել եւ հետեւակ, եւ զինտեխնիկա:

ArmLur.am-ը զրուցել է ռազմական փորձագետ Կարեն Վրթանեսյանի հետ, որը ներկայացրել է՝ ինչ է իրենից ներկայացնում զենքը, եւ որն է ստորագրված պայմանագրի օրակարգային հարցը:

CAESAR ինքնագնաց հրացանների մարտավարական եւ տեխնիկական բնութագրերը.

Ընդհանուր չափեր՝ երկարությունը՝ 10 մետր, բարձրությունը՝ 3,7 մետր, օդային փոխադրումների համար՝ 2,7 մետր, լայնությունը՝2,55 մետր:

Տեղադրման քաշը մոտ 18 տոննա է:

Կրակի արագություն՝6 ռդ/րոպե:

Կրակման հեռավորությունը՝4,5-ից 42 կմ:

Ինքնաթիռում գտնվող զինամթերքը 18 պարկուճ է:

Արագությունը մայրուղու վրա՝ 80 կմ/ժ, կոշտ տեղանքում՝ 50 կմ/ժ:

Էներգիայի պահուստ՝600 կմ.

Անիվի բանաձեւ՝6c6:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԷԹՆԻԿ ԹՇՆԱՄԱՆՔԻ ՀԻՄՔՈՎ ՁԱՆՑԱՆՔԻ ԴԵՊՔ

2024 հունիսի 10-ին ֆիզիկական անձից ՀՀ ՆԳՆ ոստիկանության բաժնում հաղորդում է ստացվել, որ նույն օրը՝ գիշերը, անհայտ անձը հարձակվել է Երեւանի Նար-Դոսի փողոցում գտնվող հրեական կրոնական կենտրոնի վրա եւ քարով հարվածել ու կոտրել է նշված կենտրոնի պատուհանի ապակին՝ պատճառելով գույքային վնաս:

Հաղորդման կապակցությամբ կազմված նյութերն ստանալուց հետո ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի կողմից Ոստիկանությանը հանձնարարվել է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ դեպքի իրական հանգամանքները, ենթադրյալ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը, ենթադրյալ հանցագործության շարժառիթը, դրդապատճառները պարզելու ուղղությամբ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ դեպքը տեղի է ունեցել հունիսի 10-ին՝ ժամը 01:43-ին, եւ «Հրեական կրոնական» կենտրոնի գրասենյակի պատուհանին քարով հարվածել եւ ապակին կոտրել է Արտաշատ քաղաքի 35-ամյա բնակիչը, ապա դիմել փախուստի:

Ոստիկանության կողմից վարույթն իրականացնող մարմնին ներկայացվել է նաեւ ձերբակալված նշված անձը:

Դեպքի առթիվ 2024թ. հունիսի 15-ին ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ:

35-ամյա անձը տվել է ինքնախոստովանական ցուցմունք, նրա մասնակցությամբ կատարվել են անհրաժեշտ քննչական գործողություններ: Կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում Նար-Դոս 23 հասցեի Հրեական կրոնական կազմակերպության պատուհանը եղել է կոտրված, իսկ գետնին հայտնաբերվել եւ վերցվել է երկու քար:

Առգրավվել եւ ուսումնասիրվել են տարածքը տեսագրող սարքի պարունակության՝ դեպքին վերաբերելի հատվածները:

Քննությամբ պարզվել է, որ նշված անձի կողմից կրոնական հաստատության պատուհանին հարվածելու, գույքային վնաս պատճառելու շարժառիթը եղել է ազգային, էթնիկական թշնամանքը:

2024թ. հունիսի 17-ին միջնորդություն է հարուցվել հսկող դատախազին 35-ամյա տղամարդու նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 146-րդ հոդվածով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը բավարարվել է, վերջինիս ներկայացվել է մեղադրանք:

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որը մերժվել է, եւ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԳՅՈՒՂԱՑՈՒ ՏԱՆԻՑ ԳՈՒՄԱՐ ԵՆ ԳՈՂԱՑԵԼ

Մայիսի 31-ին՝ առավոտյան ժամը 8:48-ին, ոստիկանություն է ահազանգել Քասախ գյուղի մի բնակիչ եւ հայտնել, որ տնից գումար են գողացել:

ՆԳՆ ոստիկանության փոխանցմամբ՝ Կոտայքի մարզի օպերատիվ կառավարման կենտրոնից հաղորդումը փոխանցվել է ոստիկանության Նաիրիի բաժին, որտեղից էլ օպերատիվ խումբ է մեկնել դեպքի վայր:

«Նախորդ երեկոյից մինչ առավոտ տանը մարդ չէր եղել, այդ ընթացքում էլ կոտրել էին եվրոպատուհանի ապակին եւ երկրորդ հարկի ննջարանից՝ներքնակի տակից, տարել էին 55 հազար դոլար:

Նախաձեռնվեց քրեական վարույթ, կատարվեցին անհետաձգելի գործողություններ: Այս ամենին զուգահեռ, տեղազննության արդյունքներն ու հանցագործության հանգամանքները համադրելով, Նաիրիի քրեական հետախույզներն առաջ քաշեցին վարկածներ: Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն արագ արդյունք տվին: Ըստ վարկածի՝ կար եւ կազմակերպիչ, եւ կատարող, եւ օժանդակող:

Ահազանգից մոտ չորս ժամ անց՝ ժամը 12:30-ին, Քասախ գյուղի իր տանը հայտնաբերվեց 37-ամյա օժանդակողը: Եվս երեք ժամ անց մայրաքաղաքի Բաշինջաղյան փողոցում, համագյուղացու տնից գողությունը կազմակերպելու կասկածանքով, ձերբակալվեց եւ ոստիկանության Նաիրիի բաժին տեղափոխվեց Քասախի բնակիչ 38-ամյա տղամարդը: Նա էր ուղղորդել երեւանցի 41-ամյա տղամարդուն հաղորդելու անհրաժեշտ տվյալներ եւ մայիսի 30-ի երեկոյան էլ իր մեքենայով նրան հասցրել էր համագյուղացու տան հետնամաս ու հեռացել:

41-ամյա երեւանցին, զինված անհրաժեշտ գիտելիքներով ու տեխնիկական միջոցներով, մտել էր տուն եւ տարել գումարը: Այնուհետեւ երեւանցին կապվել էր կազմակերպչի եւ օժանդակողի հետ: Հանդիպել էին Երեւան-Աշտարակ ավտոճանապարհին, որտեղ կատարողը 7600 դոլար տվել էր կազմակերպչին, 7500 դոլար՝ օժանդակողին: Ի դեպ, վերջինս իր վարձատրությունն ամբողջությամբ ի պահ էր հանձնել մի երրորդ անձի:

Կազմակերպիչն ու օժանդակողը ներկայացվել են նախաքննական մարմին, որտեղ տվել են խոստովանական ցուցմունք եւ տեղափոխվել ձերբակալվածների պահման վայր:

Օժանդակողի վստավելի անձի խուզարկությամբ հայտնաբերվել է գողոնի մի մասը՝ 7500 դոլարը, իսկ կազմակերպիչն իր զոքանչի տնից ներկայացրել է 4400 դոլար գողոն:

Դատարանի որոշմամբ կազմակերպիչն ու օժանդակողը կալանավորվել են: Ձեռնարկվում են միջոցներ՝ երեւանցի կատարողին եւ գողոնի մնացած մասը հայտնաբերելու ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է», - ասված է ոստիկանության հաղորդագրության մեջ:

ԼՈՒՐԵՐ

ՏՈՒԳԱՆՔ՝ ԳՐԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Իրավապահները շարունակում են պատասխանատվության կանչել այն քաղաքացիներին, որոնք սոցիալական ցանցում Նիկոլ Փաշինյանի մասին գրառումներ են կատարում: Մասնավորապես՝ Դավիթ Մովսիսյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա 2022 թվականի դեկտեմբերի 12-ին, քաղաքական հայացքներով պայմանավորված, տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ, բռնություն գործադրելու հրապարակային կոչ է արել ուղղված ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ համացանցի «Ֆեյսբուք» սոցիալական կայքի իր կողմից օգտագործվող David Movsisyan տվյալներով օգտահաշվով նույն սոցիալական կայքի Yerevan.today կայքէջի՝ «Թուրքիան, Հայաստանն ու Ադրբեջանն ունեն իրար կարիքը. Նիկոլ Փաշինյան» հրապարակման տակ կատարելով՝ «էս վիժվածքին օր առաջ պիտի սատկացնել» գրառումը:

2 տարի քննելով այս գրառումը՝ դատարանը կայացրել է որոշում:

Դավիթ Մովսիսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 330 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանքի կատարման մեջ, եւ նրա նկատմամբ պատիժ նշանակել տուգանք՝ հանցանքը կատարելու պահին նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 680.000 (վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամի չափով:

ՉՎԵՐԹԻ ՈՒՇԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Երեկ առավոտյան հայտնի դարձավ, որ Wizzair ավիաընկերության Միլան-Երեւան չվերթը, որ պետք է Հայաստան ժամաներ առավոտյան 05:25-ին, ուշացում է ունեցել, եւ Հայաստան է մեկնել 5-6 ժամ ուշացումով:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Wizzair ավիաընկերության այդ չվերթում կան 2 տասնյակ եւ ավելի հայ ուղեւորներ, որոնք Luna Tour տուրիստական կազմակերպության միջոցով էին մեկնել Միլան: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում տուրիստական կազմակերպության ներկայացուցիչն ասաց, որ չվերթի չկայացման պատճառն այն է, որ վատացել է օդաչուի ինքնազգացողությունը եւ հայտնեց այլ մանրամասներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 18-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 113 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳՈՒՄԱՐՆԵՐ ՉԵՆ ՀԱՏԿԱՑՎՈՒՄ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք արել, թե 2024 թվականին Դեբեդի ափի ամրացման աշխատանքների համար պետբյուջեից կամ այլ կազմակերպությունից որքան գումար է նախատեսված: Մարզպետարանից պատասխանել են. «Հարցի վերաբերյալ առաջարկում ենք դիմել պետական լիազորված մարմին»: Մարզպետը պարտավոր էր հայտնել, թե ո՞րն է այդ խնդրով պետական լիազոր մարմինը, սակայն չի հայտնել: Իրականում պետական բյուջեից կամ այլ կազմակերպությունից այս տարի, ինչպես եւ նախորդ տարիներին, Դեբեդի ափի ամրացման համար գումարներ չեն հատկացվել: Վարարած Դեբեդը, հանդիպելով ժայռերով եւ փոքր քարերով ամրացված վրացական ափին, քշում-տանում է Հայաստանից տարածքներ: Մայիսի 26-ի հեղեղից վարարած Դեբեդը Վրաստանին սահմանակից Դեբեդավան գյուղից կես հեկտար տարածք է քշել-տարել: Փոքր Հայաստանի տարածքն այդկերպ ավելի է փոքրանում: Պետական բյուջեում միլիարդավոր դրամներ կան՝ պետական պաշտոնյաներին չգիտես թե ինչ ձեռքբերումների ու նվաճումների համար պարգեւատրելու համար, սակայն Դեբեդի ափի ամրացման աշխատանքների համար գումարներ չկան: Նման վատ իրավիճակ է տասնամյակներ շարունակ:

ԴՊՐՈՑԻ Ո՞Ր ՇԵՆՔ ԿՀԱՃԱԽԵՆ

Հայտնի չէ, թե այս տարվա սեպտեմբերին դպրոցի որ շենք կհաճախեն Իջեւան համայնքի սահմանամերձ Կիրանց գյուղի աշակերտները: Կիրանցում կառուցվող դպրոցի շինարարության համար ՀՀ պետական բյուջեից 615 միլիոն դրամ է հատկացվել, հայտարարվել է, որ Կիրանցում առաջին անգամ դպրոցի տիպային շենք է կառուցվում: Դպրոցի շինաշխատանքները սկսվել են 2021 թվականին՝44-օրյա պատերազմից հետո, դպրոցի շենքի նախագծման եւ կառուցապատման փուլում իշխանությունն ինչո՞ւ հաշվի չի առել այն հանգամանքը, որ սահմանազատումից հետո դպրոցի շենքը շատ մոտ է լինելու սահմանին, ադրբեջանցի զինված սահմանապահներին: Կիրանցի հիմնական դպրոցի տնօրեն Վոլոդյա Բաբինյանին հարցրինք՝ինքը աշակերտների ծնողների հետ հանդիպե՞լ է, որպեսզի ճշտի, թե նոր ուսումնական տարում դպրոցի ո՞ր շենք են հաճախելու աշակերտները: Նա ասաց, որ դեռ չի հանդիպել, առաջիկայում կհանդիպի: Վ. Բաբինյանին հարցրինք նաեւ, թե ե՞րբ է շահագործման հանձնվելու սահմանազատման հետեւանքով Ադրբեջանի սահմանից մոտ 50 հեռավորությամբ հայտնված դպրոցի նորակառույց շենքը: Վ. Բաբինյանը հայտնեց՝ իրեն ասել են, որ դպրոցի նոր շենքը պատրաստ կլինի սեպտեմբերին: Կիրանց գյուղի 41 աշակերտները հաճախում են 3-4 աստիճանի վթարային դպրոց, որը Կիրանցի համայնքապետարանին պատկանող շենք է, հարմարեցված է որպես կրթօջախ: Վ. Բաբինյանը, այնուամենայնիվ, հույս ունի, որ դպրոցի շենքի հետ կապված խնդիրը դրական լուծում կունենա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԵԿՆԱՐԿ

Հունիսի 17-ին, տեղի է ունեցել Փամբակ համայնքի, Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղի եւ «Քոշաքար» համայնքային սոցիալ-բնապահպանական հասարակական կազմակերպության միջեւ երկարաժամկետ համաձայնագրի կնքման արարողությունը, որով սկիզբ դրվեց «Էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցություն» տարածաշրջանային ծրագրի մեկնարկը համայանքի 3 բնակավայրերում՝ Եղեգնուտում, Դեբեդում եւ Մարգահովիտում:

Ծրագրի շրջանակում կստեղծվի համայնքային բնապահպանական գոտի, որը կկազմի շուրջ 7,938 հա (1,776 հա հիմնական եւ 6,162 հա կայուն կառավարման գոտիներ): Շուրջ 263,840 եվրո կտրամադրվի WWF-ի կողմից ոչ միայն բնապահպանական նպատակների, այլեւ շահառու բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման համար (արդեն սկսվել են արոտների ենթակառուցվածքը բարելավելու աշխատանքները եւ տեղադրվել են արեւային կայաններ բոլոր շահառու բնակավայրերում):

Միջոցառմանը ելույթ ունեցան ԷՄՀ տեխնիկական խորհրդատու Յերնի Սթրիթին, WWF Հայաստանի տնօրեն Կարեն Մանվելյանը, ԷՄՀ ծրագրի ազգային համակարգող Արմեն Շահբազյանը եւ WWF Հայաստանի ԱՏՀ մասնագետ Արման Կանդարյանը, ովքեր Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղ ներկայացրին ծրագրի երկրորդ փուլի ընթացքը, խոսեցին գրանցված հաջողությունների եւ նախածված քայլերի մասին: Վերջինիս հաջորդեց ԼԻԼԱ ծրագրի ՌԶԳ համակարգող Ալլա Ղազարյանի ելույթը ծրագրով կատարված աշխատանքների ընթացքի մասին:

ԷՄՀ ազգային համակարգող Արմեն Շահբազյանը հայտնեց. «Մեզ համար ոգեւորիչ է, որ Փամբակ համայնքը ցանկություն հայտնեց միանալ այս ծրագրին. առանց համայնքի ակտիվ մասնակցության բնապահպանությունը պարզապես կձախողվի»:

Միջոցառման հյուրերի թվում էին ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության (BMZ), KfW բանկի, Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության (SDA), «Ռազմավարական Զարգացման Գործակալություն» (ՌԶԳ) ՀԿ-ի ներկայացուցիչները ի դեմս այլ հյուրերի:

«Այսօրվա համաձայնագիրը արտացոլում է մեր հանձնառությունը՝ լավագույնս համատեղելու բնապահպանությունը տեղական սոցիալ-տնտեսական աճի հետ», - նշեց WWF-Հայաստանի հասարակության հետ կապերի, համագործակցության եւ ֆոնդահայթայթման ղեկավար Ժակ Նիազյանը:

«Էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցություն» տարածաշրջանային ծրագիրը մեկնարկել է 2015 թվականին: Հայաստանում այն իրականացվում է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի (WWF-Հայաստան) եւ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ջանքերով եւ ֆինանսավորվում է Գերմանիայի կառավարության կողմից՝ KfW զարգացման բանկի միջոցով:

ԷՄՀ II փուլի ծրագիրը համաֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության /SDC/ կողմից ֆինանսավորվող «Հայաստանի կենդանի լանդշաֆտները շուկայի զարգացման համար» /LILA/ ծրագրի կողմից՝ նպաստելով տեղական բնակչության կենսապայմանների ապահովմանը՝ նույն թիրախային բնակավայրերում էկոտուրիզմի, վայրի հավաքի եւ անասնապահության զարգացման միջոցով:

Ծրագիրը նաեւ կնպաստի կառավարման տարբեր մակարդակներում գյուղատնտեսական եւ կենսաբազմազանության վերաբերյալ համապատասխան քաղաքականության մշակմանը, ինչպես նաեւ կլիմայի փոփոխության ազդեցության նկատմամբ համայնքների եւ էկոհամակարգերի դիմացկունության ամրապնդմանը: /LILA/ ծրագրի բյուջեն կազմում է 4,500,000 շվեյցարական ֆրանկ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

100 ՀԱԶԱՐ ԵՎՐՈ

ԵՄ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԵՂԵՂԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ

Եվրոդպական միությունն օգնության ձեռք է մեկնում Հայաստանում հեղեղումների հետեւանքով տուժածներին:

ՀՀ-ում ԵՄ-ի ներկայացուցչության հաղորդմամբ, Հայաստանի Լոռու եւ Տավուշի մարզերում մայիսին տեղացած հորդառատ անձրեւներով պայմանավորված հեղեղումների հետեւանքով առավել շատ վնասներ կրած գյուղերին աջակցելու նպատակով Եվրոպական միությունը հատկացրել է 100 հազար եվրո մարդասիրական օգնություն:

ԵՄ ֆինանսավորումը հատկացվում է օժանդակելու Հայկական Կարմիր խաչի ընկերությանը խիստ անհրաժեշտ, այդ թվում՝ դրամական օգնություն եւ առաջնային անհրաժեշտության պարագաներ ուղարկելու գործում:

Մարդասիրական օգնությունը միտված է օգուտ բերելու ընդհանուր առմամբ 5060 ուղիղ շահառուների, այդ թվում՝ 2,500 անհատների, ովքեր կստանան դրամական օգնություն՝ լուծելու իրենց ամենահրատապ կարիքները եւ 2,760 անհատների, ովքեր կստանան աջակցություն կացարանի տրամադրման, ինչպես նաեւ ջրի եւ սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման նպատակով: Աջակցությունն ուղղված է այն տնային տնտեսություններին, որոնց տները, ցանքատարածությունները, անասունները եւ պարենային պաշարներն ավերվել են հեղեղումների հետեւանքով:

Ֆինանսավորումը տրամադրվում է ի լրումն Կարմիր խաչի եւ կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Աղետների արձագանքման Արտակարգ հիմնադրամին ԵՄ կողմից հատկացվող ընդհանուր ներդրման:

2024 թվականի մայիսի 26-ին Հայաստանի ամբողջ տարածքում տեղացած հորդառատ անձրեւների հետեւանքով տեղում գրանցված տեղումների քանակը հասել է 100 մմ-ի, որի հետեւանքով առաջացել է Դեբեդ, Աղստեւ եւ Տաշիր գետերի անսպասելի վարարում՝ վատթարացնելով հեղեղումների հետեւանքները:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 19 պատահար. 24 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԽՆԱՅԵՔ IDBank–Ի ՀԵՏ

ID բանկը նոր հայտարարություն է տարածել: «Դուք է՞լ եք սիրում անխնա ու անզուսպ գնումներ կատարել Wildberries-ում: Գիտենք, գիտենք, մենք էլ ենք նույն թեմայի մեջ: Իսկ գիտե՞ք, որ հիմա Wildberries-ում գնումներն ավելի շահավետ են, եթե վճարումը կատարեք IDBank-ի քարտերով: Այո-այո, IDBank-ի նոր արշավի մասին ենք հիմա պատմելու:

Եվ այսպես, արշավի շրջանակում այս տարվա հունիսի 16-ից մինչեւ օգոստոսի 31-ը ներառյալ IDBank-ի բոլոր վճարային քարտերով Wildberries հարթակում վճարում կատարելու դեպքում կստանաք մինչեւ 1% idcoin»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2024թ.-ի հուլիսի 2-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 36 լոտ՝ոսկյա զարդ 26 գր. ընդհանուր քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 426.700 ՀՀ դրամ: Թիվ 37 լոտ՝ ոսկյա զարդեր 31.5 գր. ընդհանուր քաշով, որից 18 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդը (զուտ քաշը՝ 15.7 գր.) 585 հարգի՝ 257.700 ՀՀ դրամ, 13.5 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ 585 հարգի՝ 221.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 479.200 ՀՀ դրամ: Թիվ 38 լոտ՝ ոսկյա ջարդոն 7.4 գր. ընդհանուր քաշով 958 հարգի, լոտի մեկնարկային գինը 199.200 ՀՀ դրամ: Թիվ 39 լոտ՝ ոսկյա զարդեր 9.7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝ 9.5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 155.000 ՀՀ դրամ: Թիվ 40 լոտ՝ոսկյա զարդեր 9.1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝ 9 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 147.000 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝բարվոք: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով՝ վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ. +374 43 00 42 27

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

Yandex Armenia

ՆՈՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Այժմ Հայաստանում դուք կարող եք օգնել բարեգործական կազմակերպություններին Yandex Go հավելվածի միջոցով: Նոր՝ «Օգնենք միասին» բաժնում օգտատերերը կարող են ընտրել, թե որքան գումար են ցանկանում փոխանցել աջակցության համար, որն էլ կավելացվի ընթացիկ ուղեւորության արժեքին: Յուրաքանչյուր ամսվա վերջում Yandex Go-ն իր կողմից կկրկնապատկի նվիրատվությունների միջոցով հավաքված գումարը՝ մեծացնելով իր ներդրումը բարեգործական կազմակերպություններին:



Աջակցությունն սկսելու համար Yandex Go հավելվածի օգտատերերը «Օգնենք միասին» բաժնում ընտրում են գումարի չափը՝10, 30, 50, 100 կամ 500 դրամ: Գումարն ընտրելուց հետո օգտատերը բաժանորդագրվում է նվիրատվությանը, իսկ տվյալ գումարն ավելացվելու է յուրաքանչյուր ուղեւորության արժեքին: Որպեսզի գործառույթն աշխատի՝ պատվիրելիս հարկավոր է ընտրել վճարման եղանակը՝ նշելով հավելվածում կցված բանկային քարտը: Նվիրատվության բաժանորդագրումը կարելի է միացնել եւ անջատել ցանկացած պահի՝ հավելվածի ձախ անկյունում գտվող ընտրացանկում: Ընկերությունը մտադիր է ընդլայնել այս մեխանիզմով առաջարկվող ծառայությունների ցանկը:

Հավաքագրված բոլոր միջոցները ուղղվում են ՆԻԿԱ հիմնադրամին՝ծրագրի ենթակառուցվածքի գործընկերոջը: Այդ միջոցները նա հավասարաչափ կփոխանցի Հայաստանի չորս բարեգործական կազմակերպություններին՝ «Շտապիր դեպի բարին», «Սիթի օֆ Սմայլ», «Հայ մայրեր» եւ VIVA: Հավաքագրված միջոցները կուղղվեն հիմնադրամների շահառուներին օգնելու եւ նրանց ծրագրերը ֆինանսավորելու համար: Բոլոր կազմակերպություններն անցել են մանրակրկիտ ստուգում, եւ Yandex Armenia-ն յուրաքանչյուր եռամսյակի վերջում կտրամադրի թափանցիկ հաշվետվություն:

«Սոցիալական պատասխանատվությունը ժամանակակից հասարակության զարգացման կարեւոր ոլորտներից է: «Օգնենք միասին» նախագիծը ստեղծվել է որպեսզի Հայաստանի յուրաքանչյուր բնակիչ հնարավորություն ունենա դառնալ սոցիալապես պատասխանատու եւ սկսի օգնել: Մեր խնդիրն է զարգացնել հայկական ՀԿ-ները եւ օգնել մեծացնել տրամադրվող օգնության ծավալը, ինչպես նաեւ հասարակության ուշադրությունը հրավիրել նշանակալի սոցիալական նախագծերի վրա: Հրավիրում ենք ձեզ դառնալու մեր երկրի հասարակական կյանքի մասը»:

Նշում է Ագնեսա Սարգսյանը՝ «ՆԻԿԱ» հիմնադրամի տնօրենը:

«Մենք գործարկում ենք «Օգնենք միասին» նախագիծը, որպեսզի յուրաքանչյուր օգտատեր կարողանա բարեգործությունը դարձնել առօրյա լավ սովորություն: Այժմ հեշտ եւ հարմար է դառնում օգնելը: Մենք կարծում ենք, որ համակարգված եւ մշտական օգնությունն ամենաարդյունավետն է», - կիսվել է Yandex Armenia-ի ղեկավար Արամ Մխիթարյանը:

««Օգնենք միասին» հնարավորությունը, կարծում ենք, ոչ միայն հեշտ ու արագ տարբերակ կլինի նվիրատվություն կատարելու, այլեւ՝ իր ուրույն դերը կունենա բարեգործությունն ավելի մասսայական դարձնելու գործում: Մենք շնորհակալ ենք Yandex Go Հայաստանի յուրաքանչյուր ուղեւորից, ով ընտրում է «Օգնենք միասին»-ով երթեւեկելու տարբերակն ու նվիրաբերում ցանկացած չափի գումար, դրանով իսկ հնարավորություն տալով հաշմանդամություն ունեցող երեխաներին ստանալ ջրային թերապիայի վերականգնողական կուրսեր «Երազի տուն» մանկական վերականգնողական կենտրոնում:

Yandex Armenia-ի հետ համագործակցության շնորհիվ իրականացավ նաեւ մեր կարեւոր ծրագրերից մեկը. մենք ամեն ամիս անվճար վերականգնողական թերապիա ենք տրամադրում 5 շահառուների՝ անմիջապես իրենց տանը: Ծրագրում ընդգրկված են հաշմանդամություն ունեցող այն երեխաները, ովքեր ամիսներ կամ տարիներ շարունակ, բազմաթիվ օբյեկտիվ պատճառներով, հնարավորություն չունեն վերականգնողական թերապիաներ ստանալ կենտրոններում»:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Էրեբունի, Մուրացանի փողոց, 113/1 շենք, 48 հասցեում գտնվող 46,5 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝26460000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 08.07.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝08.08.2024թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- Շիրակի մարզ, համայնք Արթիկ ք., Անկախության փողոց, 29 շենք, 33 հասցեում գտնվող 69,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 4519469 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 08.07.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝08.08.2024թ.- ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖԻԶԻԿԱ. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Սույն թվականի հունիսի 18-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Ժամանակակից ֆիզիկա. հանրամատչելիացման եւ ուսուցման հիմնախնդիրներ ու լուծումներ» խորագրով գիտաժողովը: Այն կազմակերոված է «Գիտությունը՝ հանրակրթությանը» ծրագրի շրջանակում եւ նախատեսված է ՀՀ ավագ դպրոցների ուսուցիչների համար:

Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ, գիտնականներ ՀՀ գիտական եւ կրթական հաստատություններից, ՀՀ ավագ դպրոցների ֆիզիկայի ուսուցիչներ:

Միջոցառման մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, թղթակից անդամ Արթուր Իշխանյանը: «Այսօր գիտությունը թեւակոխել է մի այնպիսի ժամանակաշրջան, երբ գիտական արդյունքն այլեւս ինչ-որ տեղ գերազանցում է մարդկային երեւակայությունը: Գիտությունն ավելի մեծ արագությամբ է զարգանում, եւ գիտելիքների մշտական թարմացումը եւ կապն առաջնագծային հետազոտությունների հետ առաջնային է ձեզ համար՝ որպես առաքյալների, որոնք լույսը պետք է առաքեն աշակերտներին եւ, ընդհանրապես, հասարակությանը», - ասաց Արթուր Իշխանյանը:

«Ավագ դպրոցի ուսուցիչները պետք է թելադրող լինեն՝ ինչ ծրագրերով եւ մեթոդով իրականացնել դասավանդումը, որպեսզի աշակերտը կարողանա որոշել՝ինչ մասնագիտություն ընտրել: Այս միջոցառման ընթացքում դուք կծանոթանաք ֆիզիկայի ոլորտի վերջին նորություններին, նոր ուղղություններին եւ նոր հետազոտություններին, որոնք կարող եք օգտագործել դասավանդման գործընթացում՝ ավելի գրավիչ դարձնելով ֆիզիկան աշակերտների համար», - ասաց ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի եւ աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս- քարտուղար, ակադեմիկոս Ռադիկ Կոստանյանը:

«ֆիզիկան այն ոլորտն է, որը Հայաստանում ունեցել է լավ ավանդույթ, եւ մենք ցանկանում ենք շարունակել այդ ավանդույթը», - նշեց ՀՀ ԳԱԱ նախագահի գիտության եւ տեխնոլոգիաների գծով տեղակալ Վարդան Սահակյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրամատչելիացման եւ զարգացման ծրագրերի վարչության պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Աթայանն ընդգծեց գիտության հանրամատչելիացման կարեւորությունը: «Մեր նպատակն է գտնել մեթոդներ, որոնք կնպաստեն Հայաստանում գիտության եւ կրթության սերտացմանը: Ֆիզիկայի ոլորտում մենք միշտ ունեցել ենք հաջողություններ: Այսօր հետաքրքրությունը որոշակի անկում է ապրում, եւ փորձում ենք հանրամատչելիացման միջոցով հաղթահարել այդ անջրպետը: Դրա իրականացնողներն ուսուցիչներն են: Մենք առաջարկել ենք ստեղծել ֆիզիկայի ուսուցիչների ասոցիացիա, մի հարթակ, որտեղ կարող են բարձրացվել հարցեր եւ առաջարկվել փոփոխություններ», - ասաց Կամո Աթայանը:

Գիտաժողովի երկրորդ մասն անցկացվեց Արտեմ Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայում:

Քառօրյա գիտաժողովի ընթացքում առաջատար գիտնականները Հայաստանի եւ արտերկրի գիտական եւ կրթական հաստատություններից հանդես կգան զեկուցումներով՝ նվիրված ֆիզիկայի զարգացման ժամանակակից միտումներին, ժամանակակից աստղաֆիզիկային, քվանտային ֆիզիկային, ակուստաֆիզիկային, ատոմային եւ միջուկային ֆիզիկային:

Հունիսի 19-ին գիտաժողովի աշխատանքները կշարունակվեն ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում, հունիսի 20-ին՝ Հայկական ատոմային էլեկտրակայանում, իսկ հունիսի 21-ին՝ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում: Հունիսի 21-ին կամփոփվեն գիտաժողովի աշխատանքները եւ մասնակիցները կստանան վկայագրեր:

Գիտաժողովը կազմակերպել են ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը:

«Գիտությունը՝ հանրակրթությանը» ծրագրին աջակցում են Արտեմ Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիան եւ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ՄԵԾԱՆՈՒՆ ՀԱՅԵՐ....»

ՆԱՄԱԿԱՆԻՇԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Հ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը մասնակցել է «Մեծանուն հայեր. Վալենտին Պոդպոմոգովի ծննդյան 100-ամյակ» թեմայով նամականիշերի մարման արարողությանը, որը տեղի է ունեցել Պոդպոմոգովի արվեստանոցում:

Միջոցառմանը մասնակցել են նաեւ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի խորհրդական Գեւորգ Մելիքսեթյանը, «ՀայՓոստ» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Արայիկ Աբրահամյանը, ֆիլատելիստների հայկական ասոցիացիայի նախագահ Հովիկ Մուսայելյանը, Վալենտին Պոդպոմոգովի այրին՝ Ասյա Պոդպոմոգովան:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի խոսքով՝ պատիվ է մասնակցել մեծանուն վարպետի 100-ամյակին նվիրված միջոցառմանը:

«Վալենտին Պոդպոմոգովի ծննդյան 100-ամյակի հոբելյանական տարում նրա հիշատակն արժեւորելու նպատակով ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Հայաստանի կինոգործիչների միության կինոյի տան մեծ դահլիճում տեղի է ունեցել հոբելյանական երեկո, ինչպես նաեւ «ՌեԱնիմանիա» անիմացիոն ֆիլմերի փառատոնի շրջանակում Շառլ Ազնավուրի անվան հրապարակի աստղային ճեմուղում տեղադրվել է վարպետի՝ մեծանուն անիմատոր, նկարիչ Վալենտին Պոդպոմոգովի անվանական հուշաստղը», - ներկայացրել է ԿԳՄՍ փոխնախարարը:

Պոդպոմոգովի այրին՝ Ասյա Պոդպոմոգովան, ներկայացրել է վարպետի կենսագրությունից հատվածներ, նրա «Նոստալգիա» եւ «Մեա կուլպա» («Իմ մեղքը») գեղանկարների պատմությունը: Ըստ նրա՝ Պոդպոմոգովը հայկական մուլտիպլիկացիայի վերածննդի հայրն է, աշխատել է «Հայֆիլմում» 50 տարի, շուրջ 20 ֆիլմերի նկարիչ է, ինչպես նաեւ եղել է Երեւանի առաջին գլխավոր նկարիչը, իսկ գեղանկարչությամբ սկսել է զբաղվել 50 տարեկանում:

«Պոդպոմոգովը գեղանկարչությամբ զբաղվել է 50 տարեկանից, եւ «Նոստալգիան» նրա առաջին գործն է. նկարել է 1974 թվականին: Ինքն իրեն համարում էր սիմվոլիստ գեղանկարիչ», - պատմել է Պոդպոմոգովի այրին:

Արվեստանոցում պահպանվում են Պոդպոմոգովի՝ տարբեր տարիներին ստեղծած կտավներ, քանդակներ եւ այլ աշխատանքներ, նրա իրերից:

320 ՀՀ դրամ անվանական արժեքով նամականիշի վրա պատկերված է ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Վալենտին Պոդպոմոգովը (1924-1998 թթ.) իր՝ «Վերջին մղոնը» կտավի խորապատկերին, իսկ 380 ՀՀ դրամ անվանական արժեքով նամականիշը ներկայացնում է նրա «Իմ մեղքը» կտավը:

Նամականիշերի վրա նաեւ առկա է «ՎԱԼԵՆՏԻՆ ՊՈԴՊՈՄՈԳՈՎ» գրառումը՝հայերեն եւ անգլերեն:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅՏՆԻ ԵՆ ՄՐՑԱԿԻՑՆԵՐԸ

Շվեյցարական Նիոն քաղաքում կայացել է ֆուտբոլի ՈՒԵՖԱ-ի Կոնֆերենցիաների լիգայի որակավորման փուլի վիճակահանությունը:

Հայաստանի առաջնության փոխչեմպիոն Երեւանի «Նոա»-ի մրցակիցը որակավորման փուլում կլինի Հյուսիսային Մակեդոնիայից «Շկենդիա»-ն:

Երեւանի «Ուրարտու»-ի մրցակիցը որակավորման առաջին փուլում կլինի էստոնական «Կալեւ Տալին»-ը:

Հանդիպումների ժամանակացույցը դեռեւս հայտնի չէ:

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԾԵԾԿՌՏՈՒՔ

Դորտմունդի «Սիգնալ Իդունա Պարկ» արենայի տրիբունաներում զանգվածային ծեծկռտուքի են մասնակցել Թուրքիայի եւ Վրաստանի հավաքականների երկրպագուների խմբերը: Այդ մասին տեղեկացնում է stavkinasport.com կայքը:

Եվրոպայի առաջնության խմբային փուլի առաջին մրցափուլի Թուրքիա - Վրաստան հանդիպման նախաշեմին երկրպագուների խոշոր բախում է տեղի ունեցել: Դորտմունդի «Բորուսիայի» տնային մարզադաշտի երկու հատվածների մենամարտը հայտնվել է լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում:

Անվանական տանտերերի խորհրդանիշերով հանդիսականներն ու հյուրերը սկզբում միմյանց վրա են նետել բաժակներ եւ այլ առարկաներ: Այնուհետեւ որոշ երկրպագուներ ուղղակի ենթարկվել են բռնության:

ԵՎՐՈ 2024–Ի ԱՌԱՋԻՆ ՏՈՒՐԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ

Իսպանական Marca պարբերականը ներկայացրել է Գերմանիայում ընթացող 2024 թվականի Եվրոպայի առաջնության մեկնարկային տուրի խորհրդանշական հավաքականը:

Դարպասապահ՝ Բարտ Վերբրյուգեն (Նիդերլանդներ):

Պաշտպաններ՝ Դանի Կարվախալ (Իսպանիա), Դավիդ Գանկո (Սլովակիա), Ալեսանդրո Բաստոնի (Իտալիա), Տեո Էրնանդես (Ֆրանսիա):

Կիսապաշտպաններ՝ Ֆաբիան Ռուիս (Իսպանիա), Նգոլո Կանտե (Ֆրանսիա), ԴենիսՄան (Ռումինիա):

Հարձակվողներ՝ Արդա Գյուլեր (Թուրքիա), Ջամալ Մուսիալա (Գերմանիա), Կոդի Գակպո (Նիդերլանդներ):

Հատկանշական է, որ Իսպանիայի, Իտալիայի եւ Նիդերլանդների հավաքականները ներկայացված են երկուական մասնակցով:

● *Հունիսի 21-ին՝ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ի զեն» հոռետեսական կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

ՀԱՐՑ. Եթե անձը ապրանքներ եւ տրանսպորտային միջոցներ է ներմուծել եւ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ է նշել, ապա այդ դեպքում տուգանք սահմանվո՞ւմ է, թե՞ ոչ: Նշեմ, որ, խախտումն առաջացրել է մաքսային վճարների պակաս հաշվարկում: Ուզում եմ իմանալ՝ խախտում սահմանելու դեպքում ինչ չափ է նախատեսվում:

Հարություն Գեւորգյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 203 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները եւ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը, որի արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում առաջացնում է չհաշվարկված կամ պակաս հաշվարկված մաքսային վճարների գանձում՝ օրենքով սահմանված կարգով, ինչպես նաեւ տուգանք՝ այդ մաքսային վճարների 50 տոկոսի չափով:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ սահմանված ժամկետում մաքսային մարմիններին ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վերաբերյալ մաքսային հայտարարագիր չներկայացնելը, անկախ գրավոր հայտարարագիր ներկայացնելուց, առաջացնում է տուգանքի նշանակում՝ 50,000 դրամի չափով: Ի դեպ, Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 212 հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտ համարվող ապրանքները ենթակա են վերցման:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե աշխատողի եկամտահարկը ճիշտ չի պահվել, ապա ի՞նչ պետք է անի: Արդյոք սահմանափակող ժամկետ գոյություն ունի՞, թե՞ ոչ:

Նելլի Պողոսյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ համաձայն «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ կետի՝ հարկային գործակալի կողմից «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համաձայն՝ ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) հարկի գումարները ֆիզիկական անձանցից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին երեք ամսվա համար, իսկ հարկերի սահմանված չափից ավելի պահված (գանձված) գումարները հաշվանցվում են առաջիկա պահումների հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող երեք օրացուցային տարվա համար:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամտից կարող են կատարվել օրենքով նախատեսված նվազեցումները (նվազեցվող եկամուտներ, անձնական նվազեցումներ եւ ծախսեր):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Շոգ ամռանը զովանալու կարիք ունեն ոչ միայն մարդիկ այլեւ կենդանիները: Ահա այս շունը քաղաքի կենտրոնի ցայտաղբյուրներից մեկի վրա «վաստակել» է իր թարմանալու իրավունքը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________
Ազգանուն՝ ______________
Առաքման հասցե՝ ______________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Գիշեր	Ցերեկ
Շիրակ	+8 +10	+22 +26
Կոտայքի լեռներ	+8 +12	+21 +24
Կոտայքի նախալեռներ	+15 +17	+28 +30
Գեղարքունիք	+10 +13	+21 +24
Լոռի	+9 +13	+24 +27
Տավուշ	+15 +17	+28 +31
Արագածոտնի լեռներ	+9 +13	+21 +24
Արագածոտնի նախալեռներ	+15 +18	+28 +31
Արարատ	+16 +18	+31 +33
Արմավիր	+16 +18	+31 +33
Վայոց ձորի լեռներ	+8 +11	+22 +24
Վայոց ձորի նախալեռներ	+16 +18	+31 +33
Սյունիքի հովիտներ	+18 +22	+29 +32
Սյունիքի նախալեռներ	+13 +15	+25 +28
ԼՂՀ	+13 +14	+25 +26
Երեւան	+19 +21	+23 +25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.6.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*